

ծակ, = ζωοφωτός, կենսաբար: — էջ 109. նշանականք = σφμαντιχά, նշանակիչ, որ էջ 127 փոխուած է “նշանակ,ի: — էջ 100. “Ոչ Աստուածութիւնն, յէ՛ հերձուածող”, յուն. պարզապէս οὐ θέσσης, αἰρετικῆ (Loofs, 235): — էջ 109. “Ձի գծնելութիւնն զ’ի յերանելուն կուէն Որդւոյ այս (?) կողեցես, չ. հրատարակիչք երաւամբ դրած են հարցական. յոյն լոկ. οὐδὲν μὲν χαλῆς (Loof, 274): — Առաջագրաւ է ի վերջոյ համուռ բառին գործածութիւնն էջ 127 “Եւ բոլորովին, ասէ, եթէ զամբայն համուռ զնորն ընտրեցես, յուն. καὶ ὅλας εἰ πᾶσαν ὁμοῦ τῇν καὶ νῆν μεταλλεύεις (Loofs, 269).

Այսչափ հետաքրքիր հաստատենքու մասին:  
Հ. Ն. Ա.

#### 4. ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ Ի ՆՊԱՅՑ ՁԵՑՈՒՄԻՆ ՍՈՒԵԼՈՑ

Պր. Աղէքսանդր Մ. Բնութիւյան, ծանօթ իւր եռանդուն ազգասէր գործունէութեամբը, վիեննայի հայ գաղութին մէջ ի նպաստ Ձէյ-թունի սովելոց հանգանակութիւն մը բացաւ, որմէ գոյացաւ 525 ֆրանքի արդիւնք մը: Այս գումարը անմիջապէս ղրկեց Ամենապատիւ Իզմիրեան Ս. Պատրիարքին, ծառայեցընելու առաջադրեալ նպատակին:

#### 5. ՁԵՆԳ ԸՍԲՈՒՄԹԵՐԹԸ

Զայտմ Բակու հրատարակուած թերթերուն ամենէն լուրջ թերթը կ’երեւայ “Ձանգ”-ն. այս պատճառաւ ալ կը յուսանք եւ կը մաղթենք, որ աւելի երկարակեաց ըլլայ: Առջեւնիս ունիմք ցայտմ հրատարակուած թուրքէն 1, 2 եւ 4 թուերը, որոնք ստուգելու լաւ տպագրութիւն մը կը թողուն ընթերցողին վրայ. բաղձալի էր որ արտաքինը փութով լաւագործ յարգարանք մը եւ զարդարանք մը զգեցնուր. խօսքերնիս թղթին ու տպագրութեան մաքրութեան ու ճաշակատրութեան վրայ չէ, վասն զի այս կողմանէ ամենայն գովութեան արժանի է եւ հրատարակուած շատ ար թերթերուն իբր օրինակ կրնայ հանդիսանալ այն կողմանէ. պահատութիւնը զոր մասնանիշ կ’ընենք այն է, որ թերթը չուրի կող մը, որ զայն պարփակէ եւ գեղեցիկ երեւցընէ առաջին իսկ անարկին: Այնու աւելի պէտք կայ այս

զարդին, որ “Ձանգ”-ը հրատարակուի իբրեւ գրական, հասարակական, տնտեսական եւ գեշ զարուեստական շաբաթաթերթ եւ այն պար-կեւաւոր:

Առաջին երկու թուերը, որ միացեալ հրատարակուած են կը բովանդակեն բազմաթիւ պատկերներ նշանաւոր անձանց զ. օր. խրիմեանի, Արծրունիի, Բաֆթիի, Ռ. Պատկանեանի եւն: Բովանդակութեան գալով կ’ենթադրուի առաջին թուերուն վրայ կարելի չէ ճշգրիտ դատաստան ընել առանց շարունակութիւնները աչքի առնելու ունենալու: Չորրորդ թիւը արդէն յայտնի առաւելութիւններ կը ներկայացընէ առաջին երկու թուերուն համեմատութեամբ: Բայց ընդհանրապէս կը նշմարուի ծրագրի անկանոնութիւն մը, զոր հարկ անհրաժեշտ է դարձնել: Կ’ենթադրուի ժամանակն ու պարագաները մեծապէս պիտի նպաստեն թերթին զարգացման. կը մաղթենք խմբագիր-հրատարակիչ Կ. Խատիսեանի յաջողութիւն իւր գեղեցիկ ու գովելի ջանքերուն մէջ:



#### ԲՈՒԿԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

- Աւստրիոյ Վենսիաիւ Վայսեր գահակալութեան “Կա-մանդայն յորելեանք. 353:  
ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ — Միխիթր Գօշի Դատաստանա-գիրքը եւ հայոց հին քաղաքագրական իրաւունքը. 361: — Հայերէն Նոր բառեր Տիմիթէոս Կուզի հակաճառութեան մէջ. 367:  
ՊԱՏՄԱԿԱՆ — Բիւզանդիոն եւ Պարսկաստան. 372:  
ԳՐԱԿԱՆ — Գրական դէմքեր, իւրի վեանովակի. 376:  
ՄԱՏԵՆԱՍՕՍԸԿԱՆ — Տունկերը եւ անոնց հայերէն անունները. 379:  
ՍՅԼԵՆԱՅԼԸ — 1. Արեւելագիտաց ծԻ. միջազգային համաժողովը. 381: — 2. Վարազայ զարդին յիշատակը. 382: — 3. Բառեր Տիմիթէոս Կուզի հակաճառութեան մէջ. 383: — 4. Հանգանա-կութիւն ի նպաստ Ձէյթունի սովելոց. 384: — 5. Հանգ Շաբաթաթերթը. 384:



ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ԾԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՐԱԿԻՐ

#### Հ. ԲՈՒՍԵՒԼ Կ. ՊԱՐՈՆՉ

ՎԻԵՆՆԱ. ՄԻԻԹԱՐԵԱՆ ՏԳՐԱԿԱՆ